խառնվիր. և ամօթալից դառնան և զան առ Առաջնորդն պատմել, և խորհուրդ առնեն զի առաւօտուն դատաստան արասցեն և նզովեսցեն զԱահակն համախոհիւք։

Ուրբաթիս (9 Նոյ.) չինեն զեկեալ արսն և ասեն՝ Միայն թէ զկողմ Մղտեսուն պարտեմք. եւ նստին յեկեղեցին Սուրբ Նիկողայոսի, և գրով Առաջնորդին աղերսիւ բերեն զԽանճին և զՏաւութն և զՄղտեսին ստէպ ստէպ կանչեն և զայլսն ոչ։ Եւ ասացաք՝ թէ ի մերայնոցն ոմանք զզուեալք եղեն, և ոմանք ի բանիցս անգիտակ, որք ի ժողովն օրս ոչ գտան, և նոքա չինեալք. ասէ Առաջնորդն թէ Վասն է՞ր երէց ծեծէք դուք եւ փիլոն[1]) երիցու առնէք դուք. եւ մեր երիցունքն ևս ոչ անդ։ Եւ Մղտեսին ասէ. Զհայհոյողին դատաստանն ի քէն խնդրեցաք առնել, վասն է՞ր ոչ արարեր[2]). երէց էր՝ զհաւատ և զօրէնս անարգեաց։ Եւ ամենեքեան ի տեղւոջէ իւրեանց ասեն. Բարի մարդ ես դու և վասն է՞ր ընդ սոցունց խառնիս, ա՛յ Մղտեսի, և երես կու տայք մէկ քանի արանցդ որ այդպէս կ'առնեն. և սա ասէ. Դոքա՞ լաւ մարդ են մինթէ։ Եւ Առաջնորդն ասէ. Ո՛վ է աթոռակալ՝ եկեսցէ. և առնեն յայնժամ աթոռակալ զմի յԱստուածատրոցն՝ Քեօր կոչեցեալ եւ զայնս որք նախ էին, եւ մերայինքս ելին անտի և եկին՝ Ծ օր կալեալ զեկեղեցոյ կէլուր։ ԶՌ ըստակ եղև. Ե օր զեպիսկոպոսն կերակրեալ, ԺԵ օր զԴաւիթ վարդապետն, Լ օր զՂազար վարդապետն։ Եւ հասին Աստուածատուրքն ըղձից իւրեանց այսու, և մերայինք ցրուեալ ամենեքեան գնացին յայլ եկեղեցի յաղօթս։

Եւ Կիրակիս (11 Նոյ.) կարդաց Էսլի թոռն զէջմիածնի թղթերն։

1) փիլուն. 2) արարին.